ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.03.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/15

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար «Ծխախոտ», «Ալկոհոլային խմիչք» տեսակների ակցիզային դրոշմանիշերի և դրոշմապիտակների տպագրության աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «ԻՄՓՈՐԹ ԷՅՋՆՍԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված (16.03.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/15 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«ԻՄՓՈՐԹ ԷՅՋՆՍԻ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«ԻՄՓՈՐԹ ԷՅՋՆՍԻ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 16.03.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Բողոք բերողն ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին:

Գնահատող հանձնաժողովը 10.03.2021թ-ին իրականացրել է հայտերի բացման նիստ:

Գնահատող հանձնաժողովի 10.03.2021թ-ի թիվ 5 արձանագրության համաձայն գնահատող հանձնաժողովը որոշել է հայտերի ուսումնասիրության նպատակով նիստը կասեցնել մինչև 15.03.2021թ-ը:

Նշված նիստի արձանագրությունը հրապարակվել է տեղեկագրում:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը 15.03.2021թ-ին էլ. փոստի միջոցով ծանուցել է բողոք բերողին հայտում առկա թերությունների մասին և առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Տվյալ դեպքում հանձնաժողովի քարտուղարն առանց գնահատող հանձնաժողովի որոշման բողոք բերողին առաջարկել է շտկել հայտում առկա անհամապատասխանությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 46-րդ և 50-րդ հոդվածների դրույթներով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ բողոքը բավարարել, այն է պարտավորեցնել ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1 ծածկագրով գնահատող հանձնաժողովին ընդունել գնահատման նիստը կասեցնելու և հայտում անհամապատասխանությունները շտկելու առաջարկ անելու մասին որոշում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 23.03.2021թ. ժամը 09:40-ին և 26-03-2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած փաստերը, հիմնավորումները.</u>

Ի պատասխան Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 17.03.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/3867-202 գրության՝ բողոքի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ, ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 18.03.2021թ թիվ 1/18-2/15231-2021 գրությամբ ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 23.03.2021թ. ժամը 09:40-ին և 26-03-2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3.<u>ԳԲՔԱ-ՆԳ-2021/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2021/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իր կարիքների համար «Ծխախոտ», «Ալկոհոլային խմիչք» տեսակների ակցիզային դրոշմանիշերի և դրոշմապիտակների տպագրության աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԻՄՓՈՐԹ ԷՅՋՆՍԻ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.03.2021թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել «ԻՄՓՈՐԹ ԷՅՋՆՍԻ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

3. «ԻՄՓՈՐԹ ԷՅՋՆՍԻ» ՍՊԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոք է ներկայացվել 16.03.2021թ.:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ԻՄՓՈՐԹ ԷՅՋՆՍԻ» ՍՊԸ-ի 16.03.2021թ. ներկայացված բողոքը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Այսպես՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իր կարիքների համար «Ծխախոտ», «Ալկոհոլային խմիչք» տեսակների ակցիզային դրոշմանիշերի և

դրոշմապիտակների տպագրության աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԻՄՓՈՐԹ ԷՅՋՆՍԻ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.03.2021թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ «ԻՄՓՈՐԹ ԷՅՋՆՍԻ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, սակայն բացակայում է հայտի ապահովումը:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել «ԻՄՓՈՐԹ ԷՅՋՆՍԻ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 15.03.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ԻՄՓՈՐԹ ԷՅՋՆՍԻ» ՍՊԸ-ն 16.03.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Գնահատող հանձնաժողովի քարտուղարը 15.03.2021թ-ին էլ. փոստի միջոցով ծանուցել է «ԻՄՓՈՐԹ ԷՅՋՆՍԻ» ՍՊԸ-ին հայտում առկա թերությունների մասին և առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Տվյալ դեպքում հանձնաժողովի քարտուղարն առանց գնահատող հանձնաժողովի որոշման «ԻՄՓՈՐԹ ԷՅՋՆՍԻ» ՍՊԸ-ին առաջարկել է շտկել հայտում առկա անհամապատասխանությունը:

Ամփոփելով բողոքը՝ «ԻՄՓՈՐԹ ԷՅՋՆՍԻ» ՍՊԸ-ն խնդրել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին պարտավորեցնել «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնահատող հանձնաժողովին ընդունել գնահատման նիստը կասեցնելու և հայտում անհամապատասխանությունները շտկելու առաջարկ անելու մասին որոշում»:

Այսպես, Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ եթե հայտերի բացման և ***գնահատման նիստի ընթացքում*** ***իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների***

նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Այսպիսով՝ ուսումնասիրելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 18.03.2021թ թիվ 1/18-2/15231-2021 գրությամբ ներկայացված Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.03.2021թ. նիստի թիվ 6 արձանագրությունը՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.03.2021թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշման համաձայն է գնահատող հանձնաժողովի քարտուղարը 15.03.2021թ. էլեկտրոնային եղանակով ծանուցել Ընկերությանը՝ հրավերի պահանջների նկատմամբ հայտում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

Վերը նշված փաստական հանգամանքով պայմանավորված՝ գտնում եմ, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ԻՄՓՈՐԹ ԷՅՋՆՍԻ» ՍՊԸ-ի կողմից 16.03.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**